

մը՝ պատուական հնութիւն մը՝ յիշատա-
կելու համար մեզ) կ'ընդօրինակէ Ար-
տազ գաւառին Օքքարիս անուն դէտը
Խակ Ատեփաննոս Ախունեցին այսինքն Տա-
րօնեցին. Վեսրովլոյ աշակերտը՝ որ Քը
բիստոսի 400—406 թուականին, հինգե-
րորդ դարուն սկզբան միջոցները կ'ծաղ
կէր, այսինքն՝ սակէց 1465 կամ 74 տարի
յառաջ, որ ժամանակ որ Վեսրովլոյ ամք
կ'փայլէին, և Հայկազեան տառերը գլո-
ւել կճգնէր. Ա. Վեսրովլոյ, ինչպէս որ
արժանացաւ, և տակաւին հայոց թուա-
կանը վերանորոգուած չէր. ուստի շատ-
կարելի ու հաւանական է, որ նոյն միջո-
ցին գտնուած յունական կամ այլ ազ-
գաց տառերով և կամ լեզուներով գը-
րուած գրքերէն քաղած լինի (ինչպէս
որ այս Ախունեցին ուրիշ բաւական թարգ-
մանութիւններ՝ մէկնութիւններ ու հե-
ղինակութիւններ ունի, որոնցմէ մի քա-
նին ձեռքերնիս հասած է). որով և շատ
դժուարութիւն չը մնար, այս հազոււ-
թիւտ հնութեան վերայ կարեւոր և հե-
տուաքըրբական պարագաներ յառաջ բերե-
լով՝ տարակուածելի խորհրդածութիւններ
և բացատրութիւններով կասկածներ
ցոյց տալու. մասաւանդ որ ամէն կերպե-
րով հաւանելու և հաւատալու արժա-
նի է.

Արդ մեր այս դուզնաքեայ աշխատուե-
լսու մէծի մասին իւր լոյսը վերոյիշեալ
թերթերէն քաղելէ զէնի, կ'փութամ
ստորեւ մեր Ա. Երկեղեցւոյ հիմնադիր ա-
ռաքելոց՝ աշակերտաց և նոցին յաջորդաց խորենացին կ'վկայէ, որ Ամասիայի անու-

ոմննց՝ որքան որ ցարդ գտնել կարելի
եղած է, անունները դասակարգելով,
գլխաւորապէս՝ իմ այս յառաջակայ դրու-
թեան շարժառիթ բուն նպատակիս հա-
մեմատ՝ իմադդէու առաքեալէն սկսելով
մինչեւ Ա. Լուսաւորիչը անցայտ յաջորդաց
անունները ժամանակագրութեամբ դնել,
և իմ և ամենասիրելի Ազգայնոց շատե-
րուն անձուկը մատակարարել։

Անէ և փափագելի էր նաև մինչեւ մեր
օրերը (ց 1866) Պէտորդ Դ. Ա. Լիաթու-
ղիկոսը՝ Ճիշտ առաքելական յաջորդ Ալ-
թուղիկոսաց ևս անունները դնել, բայց
այն յայտնի է աւանիկ յեկեղեցական
գիրս։

Հարունակելի։

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Արտատեան դաշտի ըրջանակա լեռները։

ա. Մասիս։

Հայաստանեայց աշխարհքի առաջի աշ-
խարհահռչակ լեռնե պարծանք մեր Հայ-
քենեաց, և մեր Հայկազուն Պահապետ-
ներէն Վասիս սեպհական անունը վրան
առած Ամասիս Պահապետէն. որ Հայկայ
սերունդէն ութիւններորդն էր, և Հայաս-
տան աշխարհքի Արարատեան դաշտին
մէջ. սորա անուանակոչութեան համար
ուսպելոց՝ աշակերտաց և նոցին յաջորդաց խորենացին կ'վկայէ, որ Ամասիայի անու-

Նէն առնուած է . . . , Բայց զլեառնասէ ,
Վմասիս . անուանէ իւրուլ անուամբն
Վասիս . . . 1.

Վեծամարտին և բարձրագագաթ է
Վասիս լեառն . իր աշխարհագրական դեր
քըն է ընդ 39—30 . աստիճանաւ հիւսիսա-
յին լայնութեան՝ նոր աշխարհագրաց
հաշուով :

Բարբոտոր Վասիլ զննեց 1828 թուին .
նորա բարձրութը Ավելանոսի մակերեսու-
թէն կ'դնէ 16254 . փութ Փարիզոյ աւե-
լի . իսկ նորա գագաթան բարձրութիւնը
գաշտի հաւասարութենէն, մինչև գագա-
թը՝ երեք վերստ Ուուսաց :

Ոորա գրածէն աւելի տեղեկութիւն
տուաւ Գերմանացին Վբեխ . որոյ յօդ-
ուածքը Տիխիսու Լաւկաս անուն չայ և
Ուուս լրագիրք հրատարակեցին 1845, և
1846 . թուականների մէջ :

Վեր համազգի մատենագիրք Վասիս
լեռան բարձրութեան համար համառօտ
բայց Ճիշտ խօսեցած են . Վաթանգեղոս
եօթն աւուուր Ճանապարհ կ'դնէ նորա բար-
ձրութիւնը . Հեթում պատմագիրը՝ Հա-
յաստանի մէջն է . կ'գրէ, լեռան Վասիս .
ամէն լեռներէն բարձրագոյնը, որ երկրիս
երեսը կ'գունուին :

Ոոցա առաջինը կ'ուղղէ Բարբոտի ու-
խալը, որ Վասիսի բուրձրութիւնը մինչև
երեք վերստ կ'փոքրացնէ . իսկ երկրորդին

անհմտութիւնը կ'երեւի աշխարհագրութ-
է մէջ . որ կարծէք կ'անէ թէ՝ աշխարհքիս
մէջ միմիայն Վասիս լեառն է ամենէն
բարձրագոյնը . 1.

Վասիս լեառն վաղարշապատայ ուղղա-
կի հարաւային կողմն է իբրև օրու կիսոյ
Ճանապարհ Երասմայ այն կողմն Վրարա-
տեան դաշտի հարաւային ծայրը . որ շուր-
ջանակի լեռներուլ պատած է . լեռան
երրորդ բաժինը գագաթամբն հանդերձ
թանձր ձիւնով ծածկուած է ամառ և
ձմեռ :

Խորենացու գրած պատառուածքը՝ լե-
ռան արեւելեան երեսն է . գագաթէն մին-
չև կեսը կ'համսի ահագին ձորի պէս բա-
ցուած . ուր կ'սկսի մեծ վեհը . բայց իրէն
ձիւնաթաղ գագաթը հարաւոյ և արեւմը-
տեան կողմէն՝ ամբողջ և միապաղաղ են .
գագաթնակէտը երեք փոքրիկ բլրանե ու-
տեր կան ձիւնեղէն բարձրութեանը մէջ .
արեւելեան և արեւմտեան ոստերը հաւա-
սարաչափ բարձր են քան զիւսիսայինը .
Վայ բոլորակ գագաթան արեւմտեան ըս-
տորոտը . որ լեռան մինչև երրորդ բաժինը
իջած է . և ամառը հաղիւթէ երակ երակ
սեռութիւն կ'երեւի վրան, փոքր տափարակ
լանջ ձևացած լինելով : Բարբոտ իր Ճա-
նապարհորդութեան ժամակին մինչև այս
տեղ միայն կարողացաւ ենել յամին 1828
և փայտէ խաւ կանգնել :

1. Աշխարհքիս ուրիշ բարձր լեռների համար քան
զՄասիս տեսի Ճանապարհորդութեան վագնե-
րի . Գերմանացոյ :

Մասիսի արևմտեան լեռնագօտին ,
հարաւէն յառաջնալով կ'երիարի լուս-
նաձեւ մինչև Արարատեան դաշտի ար-
ևմտեան շրջապատը , այն է մինչև Երաս-
խայ մաւուքը յիշեալ դաշտին մէջ , ուր է
Բարդող լեռառն (կողը այս սարեցն)և անտի
մինչև Ճակատ գաւառի հիւսիսային
սահմանագլուխը . իսկ նորա արևելեան գօ-
տին , որ առաջնոյ պէս երկայն տարածու-
թին ըռմի , իւր վրա ունի փոքրն Ամսիս
զոր ահա կ'գրենք :

Ը արունակելի

Շանօթութիւն .

Մասիսի աւ պատուուածքը նորենացու յիշելովը՝
Հայաստանի հնախօսութեան հեղինակը մեծ միալա-
նաց մէջ ձգերէ այլ և այլ անսայդ ստորագրութիւն-
ներով այս մեծ լեռանը վերայ . որոնք նորան սեպհա-
կան չեն և ընդգէմ կ'ելանեն ականատեսների գը-
րուածոց . յիշեալ հեղինակը ինչպէս հնախօսութեան
մէջ նշյապէս ևսիւր նոր Հայաստանի մէջ հաւասու-
թիւն ըւնի Մասիսի ստորագրութեան . որոյ մէջ ինքն
խոտորելով , լեռան ևս այնչափ կ'օտարացնէ , մինչև
ականատեսների աչքից կարծես թէ կ'հանէ զայն . յի-
շեալ երկու գրոց մէջն ևս հեղինակը Մասիս լեռան
միապալալ գագաթը երկճիւղ ցոյց կ'տայ . բայց սյն
մանր երեցած ոստերը հազիւ թէ գագաթին հարթ
հաւասարութեանը մէջ կ'նշմարուին . որովհետև ինչպէս
որ գրեցինք . Մասիսի սիւմափէս բարձրացած ձիւնա-
թաղ գագաթը արևելքի կողմէն սկսելով մինչև հա-
րաւ և արևմուտքի կողմը բալորչի և որ ամենեին ան-
մերձենալի է մարդկային ոտից . միայն հիւսիսի երեսէն
պատառուածքը երեք ոստի ստորոտէն իբրև ձորակ զառ
ի վայր բացուած ու լայնացած է .

Աւստի այս ստուգութեանը դէմ կ'գայ նոր Հայ-
աստանի գրածը , որ կ'ասէ . Խորվիրապի կողմէն Մասիս
լեռան գագաթը երկճիւղ կերևի հեռուէն . փոխա-
նակ ասելոյ երկու է Մասիս լեռան՝ մեծ և փոքր , և
խօսքը համառութելու թէ՝ ինքը ականապտես չե Մասիս

լեռանը , և այս շնուստովանելովը՝ մեծ միալ կ'պատ-
ճառէ նորա ստորագրութեան մէջ . որով և մէջ առնե
կ'տայ ըռնագատելու :

Աւր ականատես ըլինելը այս տեղէն յայտնի է , որ
Մասիսի գագաթը երկու ճիւղ կ'բաժանէ . այս բա-
ւական չէ . Եւրոպացի ճանապարհորդներէն ևս ո-
րոնք որ երկու տառանձին լեռան գրել են ականատեսու-
թեամբ Մասիս անունով . յիշեալ հեղինակը աշխար-
հագրաց այս մեծ միալ կ'համարի ինչպէս կ'գնէ և ,
չ'ատ . հին Հայաստանի . երես ու 0 . ռւստի և պատա-
ռուած բառը , զոր նախնիք Մասիսի կ'տան նորա հիւ-
սիսիսին երեսը կ'էսէն վեր իբրև փոր բացուելոյն
համար՝ մեծ փաստի տեղ ձեռք առած , չանք կ'անէ
երկճիւղ ցուցանել Մասիսի գագաթը առանց ակա-
նատեսութեան . և ականատեսից երկու Մասիս ասե-
լուն ցուցումն չընել .

Բայց ինքն որ անհաւասի լուրերէ կարծեաք կ'դնէ
այս ստորագրութիւնը . իիր գրուածքէն կ'հաւաստենք
նցն միշած Հասորի 70 . երեսին մէջ իւէն ականա-
տես չինելը :

Ընդ՝ Գաղղիացի Գուլիկէլմոս ոռուպիւքս աշխարհա-
գրքին ևս սբը ցոյց կ'տայ Երասմայ և Կախիչեանա/
մօտ կրկին լեռան Մասիս անուամբ . մեր հնախօսը ու-
զելով այս ջրել , կ'գրէ . զՄասիս որ առ Երասմաւ
և Կախիչեանաւ . յայտնի գիտեմք մի լեռալ , և ոչ
կրկին . պատ յայտ է թէ կրկին կոչել նորա անդա-
նօր , վասն երկճիւղ լինելոյ գիլոյ նորա ասէ . ,
յորմէ պարզ կ'երկիթէ . Հայաստանի հնախօսը Մա-
սիս լեռան կրկնութեամբը կ'վստահանայ նորա մի-
պալալ գագաթը երկճիւղ ցոյց տալ . և կրկին Մա-
սիսը ուրանալ . համարելով գուցէթէ գարաւոր յի-
շատակութեամբ մեզի հասած պատառուածքը երկօ-
ճիւղ բաժանած կ'լինի լեռնագագաթի միութիւնը .
որ չէ այնպէս . Ահա միալանք ուղղութեան մէջ .
որով և գաղղիացի աշխարհագրի ուղղութիւնը սը-
խալ կ'դատուի :